**ԹԵՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ №8**

Պատասխանատու անձինք արձանագրել են, որ Թալին քաղաքի որոշ հատվածներում, ինչպես նաև հարակից գյուղերից և մայրաքաղաք մեկնող երթուղիներով օրվա տարբեր ժամերին հաճախ առաջանում են քաղաքացիների կուտակումներ՝ փոխադրող տրանսպորտային միջոցներին սպասելու ժամանակ:

Հաշվի առնելով, որ 2025 թվականի մայիսից Թալին համայնքում գործում է միջքնակավայրային տրանսպորտ, և ուսումնասիրելով նշված հատվածները, ինչպես նաև կազմակերպելով հանդիպումներ տեղական բնակիչների հետ՝ արձանագրվել է, որ վերոնշյալ կանգառային գոտիներում բացակայում են համապատասխան սպասման պայմաններ:

Ելնելով բնակիչների սպասարկման պայմանների բարելավման անհրաժեշտությունից՝ առաջարկվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ իրականացնել ծածկոց-կանգառասրահների տեղադրում հետևյալ վայրերում՝

- Սպանդարյան փողոց՝ 1 հատ
- Խանջյան փողոց՝ 1 հատ
- Գայի փողոց՝ 1 հատ
- Քոթանյան փողոց՝ 2 հատ

Առդիր ներկայացնում ենք ծածկոց-կանգառասրահների տեղադիրքերը:

**Պատասխանատու անձինք՝**

Մնացական Ներսիսյան

Ռազմիկ Ղազարյան

Գագիկ Սարգսյան

Վիլիկ Սարգսյան